№ 54 Ապրիլ 18 (30) 1879 Ապրիլ 18 (30) № 54

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Դացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համալսարանը հարկաւոր է:—Ներքին տեսութիւն: Նամակ Ստավրօպոլից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Նամակ Պարսկաստանից:—Խառն լուրեր:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Ֆելիետօն:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՐԿԱՒՈՐ Է

Թիֆլիսում համալսարան հիմնելու անհրաժեշտութեան վրա շատ անգամ խօսելով մենք նայել ենք այդ խնդրի վրա զանազան կէտերից:

Նախ մեզ համար հարկաւոր է համալսարան, որովհետև մեր տեղական երիտասարդութիւնը, սովոր լինելով հարաւային կլիմային, մեծ մասամբ չէ դիմանում օտար երկիրների, մանաւանդ հիւսիսային կլիմային: Շատերը մեր ուսանողներից հիւանդանում են և մեռնում են օտար կլիմաներում:

Երկրորդ պատճառը որ մեզ ցանկալի է մեր երկրում համալսարան ունենալ, այն է, որ մեր միջնակարգ ամեն տեսակ դպրոցներում աւարտածների մեծ մասը զուրկ են մնում բարձրագոյն ուսումից բուն տնտեսական, նիւթական պատճառով: Թիֆլիսցի երիտասարդը ապրելով իր ընտանիքի մէջ, կարող է ամսական 30, 20 ռուբլով բաւականանալ, մի քանի դասեր տալ, ուտել և քնել ընտանիքում: Իսկ ուրիշ քաղաք գնալու համար, նրան աւելի միջոց է հարկաւոր, նրա ընտանիքը չունի այդ միջոցները և օտար երկրում դասերն էլ դժուար է ճարել:

Համալսարանը մեզ հարկաւոր է, որովհետև բարձրագոյն դպրոցը միշտ կրթողական ներգործութիւն ունի չորս կողմի շրջանի վրա: Բարձրագոյն դպրոցը մեզ անհրաժեշտ է, վերջապէս, այն պատճառով որ ժամանակ է մեր երկիրը գիտական կողմից հետազօտել: Լեզուագիտական ֆակուլտէտը կը հետազօտի մեր երկրի այլ և այլ տեղական լեզուները և մեր երկրի հնութիւնները, բնագիտական բաժինը կը հետազօտի երկիրը բնական թէ հանքային և թէ բուսական հարստութիւնների կողմից, բժշկական ֆակուլտէտը կուսումնասիրի մեր տեղական բրժշկականութեան միջոցները, և այլն:

Բայց այս բոպէիս ներկայանում է և մի այլ աւելի մեծ անհրաժեշտութիւն մեր երկրում սեփական համալսարան ունենալու:

Ռուսաստանում վերջին ժամանակները տարուց տարի աւելի սկսում են տարածվել զանազան վնասակար և վտանգաւոր երազական վարդապետութիւններ:

Մեր Կովկասի և մանաւանդ Անդրկովկասի բնակիչների բնաւորութեանը նայելով, մեզ բոլորովին խորթ են թվում ռուս սոցիալիստների և նիհիլիստների ցնորաբանութիւնները: Բայց մեր երիտասարդութիւնը ընկնելով Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Կիէվի կամ Խարկովի ռուս շրջանները, շատ հեշտութեամբ կարող է վարակվել սոցիալիստների անմիտ գաղափարներով: Այդ շատերը մեր երիտասարդներից վերադառնում են չը վարակված, դորանով մենք պարտական ենք մեր պահպանողական բնաւորութեանը....

Ուրեմն ցանկալի է որ մեր երիտասարդութիւնը միջոց ունենար բարձրագոյն ուսում ստանալու, առանց անմիջական յարաբերութիւն ունենալու ռուս համալսարանների ուսանողութեան հետ:

Իսկ դորան կարելի է հասնել միայն մի միջոցով հիմնելով մեր սեփական համալսարանը Թիֆլիսի մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՏԱՎՐՕՊՕԼԻՑ

Մարտի 26

Թէև շատ եմ ցանկանում «Մշակին» ժամանակ առ ժամանակ հարկաւոր տեղեկութիւն-

Այս տարի կարդացած հայոց դասախօսութիւններից ես դուրս բերեցի հետևեալ եզրակացութիւնը: Եթէ մի դասախօսութիւն խղճմտաբար ես պատրաստել լաւ աշխատել, յետոյ քիչ անվստահ, համեստ կերպով, մինչև անգամ քիչ շփոթված ես խօսում ամբիոնի բարձրութենից,—քո մասին կասեն թէ վատ ես կարդացել, ինչքան էլ օգտաւէտ և նոր մտքեր յայտնած լինէիր դասախօսութեանդ մէջ: Բայց եթէ խօսում ես ջաղացի պէս, թատրօնական, մինչև անգամ վայրենի շարժումներ ես անում կարդալու ժամանակ, եթէ մի բառ չը գիտես ու դրա տեղը մի ուրիշ, առաջին պատահած բառ ես գործ ածում, մի քանի բարձրաձայն, բարձրահնչիւն բառեր ես գործ ածում, շատ ես խօսում և ոչինչ չես ասում,—քո մասին կասեն թէ լաւ ես կարդացել դասախօսութիւնդ:

* * *

Զատկից յետոյ հետևեալ կիրակի օրը պ. Սենեքերիմ Արծրունի կարդաց մի հիանալի հրապարակական դասախօսութիւն «Մուրատեան ուսումնարանի մասին:» Եւ մինչև այժմ «Մշակը» ոչինչ չասեց այդ դասախօսութեան մասին.... Ի՞նչի, — երևի նախանձից.... Վատ ասել չէր կարող, գովել չէր ուզում, ուրեմն մնում էր յիշել միայն երկու տողով կատարված իրողութիւնը....

Ամօթ «Մշակի» խմբագրին, մանաւանդ որ Սենեքերիմ Արծրունու դասախօսութեան պէս դասախօսութիւն երբէք չէ կարդացվել և երբէք էլ չի կարդացվի հայերէն լեզուով: Այդ դասախօսութիւնը իդէալ էր, կատարելատիպ էր այն հրապարակական դասախօսութիւնների, որոնք պէտք է կարդացվեն հայոց հասարակութեան համար: Նախ հարցը դրանումն էր որ ազգը պէտք է յետ ստանայ հինգ վեց միլիոն ռուբլ, որ կորած էր համարվում մեզ համար: Այդ հարցը այնքան ձգտողական է... փող ստանալ... ո՞ր հայը չի դայ մի դասախօսութիւն լսելու, որտեղ խոստանում են նրան միլիոններ....

Մեր ազվօկատը շատ լաւ հասկացել է ինչպէս պէտք է ազդել հասարակութեան վրա: Բացի հայերին ահագին փողեր խոստանալուց, նրա բոլոր ձևերը այնքան անձնավստահ, ինքնահաւան և բեմական էին, որ հայոց հասարակութիւնը չէր կարող չը հաւանել նրա դասախօսութիւնը:

Նա բարձրացաւ ամբիոնի վրա ողբերգական կերպով: Երեսը քիչ պուդրով էր քսած: Սկսեց խօսել կամ աւելի լաւ է ասել վրա տալ առանց շփոթվելու, առանց համեստութեան, առանց ամաչելու, առանց կանգնելու: Որտեղ բառը չէր խմանում, գործ էր ածում մի ուրիշ բառ.... Փոխանակ ձանձրացնել կամ ի չար գործ ածել հասարակութեան ուշադրութիւնը, կարելի է ասել զբպարտել ուշադրութիւնը (клеветать вниманіе): Լեզուն խառնուրդ էր զրաբարի, կովկասեան և թիւրքաց հայերի աշխարհաբարի, ամենատոր, ռամիկ ժողովրդին յատուկ ամենաանճոռնի արտասանութեամբ: Իրողութիւն չը գիտէր,—ոչինչ, էլի փչում էր....Ռափայէլեան ուսումնարանը որ երբէք Վենեցիայից դուրս եկած չէր, դասախօսի կարծիքով Հռօմ տեղափոխվեցաւ: Մխիթարը, որ ինչպէս յայտնի է ծնվել է Սեբաստիայում և իր կեանքի մէջ միայն մի անգամ այցելել է Ս. Էջմիածինը, դասախօսի պատմածին նայելով արեղայ էր Սեբաստի և Ս. Էջմիածնի մէջ: Յայտնի է որ Գեօթէն էր բացականչել մեռնելուց առաջ «լոյս, լոյս», բայց պ. Սենեքերիմ Արծրունու համար դա մի և նոյն է, նա հաւատացնում է որ այդ Վոլտէրն էր ասել.... Նա Ֆրանսիերէն չը գիտէ, բայց յոյս ունի որ և հասարակութիւնն էլ չը գիտէ, ուրեմն չէ կարող վերաստուգել իր ասածը և անդադար կրկնում է աբժօրասիօն կամ սրա նման, Ֆրանսիերէն լեզուի մէջ չեղած բառեր, նա անգլիերէն չը գիտէ,—ի՞նչ փոյթ, դարձեալ կարելի է իրան և հասարակութեանը անհասկանալի անգլիական բառեր գործ ածել: Նա անդադար խառնում է կաթոլիկութեան և պապականութեան գաղափարները,—այդ ոչինչ: Վերջապէս մեր իրաւադէտը հաւատացնում է մեզ որ կարելի է Մխիթարեաններից յետ պահանջել հանգուցեալ Մուրատեանից նրանց յանձնած և ազգին կտակած միլիոնները, այն հիման վրա, որ կտակողը հայոց ազգին է կտակել, իսկ Մխիթարեանները գործ են ածում փողերը միմիայն հայ—կաթոլիկ երեխաների կրթութեան վրա, իսկ ազգի մեծամասնութիւնը լուսաւորչականներից է բաղկացած, որոնք տանջվում են թիւրքի և քիւրդի հարստահարութեան տակ....Բայց չէ անցնում մի հինգ բոպէ, դասախօսը յայտնում է որ կրօնը ոչինչ նշանակութիւն չունի, այլ ազգութիւնը նշանակութիւն ունի....Երևի Մխիթարեաններն էլ պարոնի կարծիքի են, որ իրանց չեն համարում պարտաւանց Մուրատի կտակի դէմ, գործածելով կտակած փողերի տոկոսները հայ—կաթոլիկ երեխաների լուսաւորութեան գործի վրա, որովհետև սրանք էլ հայ են:

ներ հաղորդելու ստաւրապօլաբնակ հայերի մասին, բայց անաջող հանգամանքներ և շատ անգամ էլ խոչընդոտներ արգելք են լինում դիտաւորութեանս։ Եւ թէ ինչպէս, այդ պէտք է հարցնել կեղծաւոր փարիսեցիներին և դպիրներին, որ պատրաստ են ամեն մի բարի գործի դէմ արգելքներ յարուցանելու, որպէս զի իրանց խաւարային գործերը ծածուկ մնան։ Երրորդ տարին է, որ Ստաւրօպօլ կը բնակիմ։ Այսքան ժամանակամիջոցում աշխատած եմ, որքան կարելի է լաւ ծանօթանալ մեր ազգայնոց կարիքների, ձգտումների և ընտանեկան սովորութիւնների հետ, թէ Ստաւրօպօլում եղած և թէ սրա շրջակայ գիւղերում ցրված անտէր ու անպաշտպան հայերի անմխիթար և աննախանձելի վիճակի վրա ասելու և գրելու բաներ շատ կան. ուրեմն մեր խօսքը պարզելով, տեսնենք թէ ինչի մէջ է կայանում մեր անմխիթար ու աննախանձելի ասած վիճակը։ Ով փոքր ինչ լաւ կը ճանաչէ մեր հասարակութիւնը, նա ինձ հետ կը համաձայնվի, որ ինչպէս ամեն տեղ հայրենիքից դուրս ապրող հայի սովորութիւնն է, այնպէս էլ ստաւրօպօլաբնակ հայը՝ բացի առևտրական գործերից ուրիշ ոչինչով չէ հետաքրքրվում, ոչ իր անցեալով և ոչ ներկայով, և որ զզվելին է, հեղհեղուկ օտարամոլութիւններով խմորվում է։ Մեր անհեռատես հայը, մանաւանդ հարուստը իր զաւակների սկզբնական դաստիարակութիւնը և կրթութիւնը իրանից միանգամայն հեռացնելով յանձնած է օտարազգի կասկածաւոր և արբեցող աղախիններին կամ մանկավարժուհիների հոգատարութեան։ Այստեղից ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մայրենի լեզուն հայ ընտանիքներից հալածված է և դրա տեղ ընդունված է մի օտարը։ Այսպիսի մի ուղղութիւն թէ որքան վնասակար է իր կորստաբեր հետևանքով, ընթերցողը լաւ կը հասկանայ։ Աւելի ցաւալին այն է, որ փոքրից սկսած մինչև մեծը՝ թէ հարուստ թէ աղքատ խօսում են օտար լեզուով։ Հարցնում ես. ինչ է պատճառը։ Պատճառը ուրիշ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կապիկութիւն. իսկ իրանց ասելով այդ մոդա է։ Հասարակ մեզանում ազգային սովորութեանց տեղ բռնած ունեն թէ հին և թէ հետզհետէ երևացող մոդաները։ Մերոնց սիրած մոդաները գլխաւորապէս կայանում են ծիծաղաշարժ և աչք շլացնող բաների մէջ։ Օտարը ինչ տեսակ շոր է հագնում, ինչ է ուտում կամ ինչ է խմում, իրանք էլ, չը հարցնելով իրանց ճաշակին, մի և նոյնն են գործ դնում։ Ով հայերէն վատ է խօսում կամ ամենևին չը գիտէ, նա համարվում է լուսաւորեալ։ Սրա համար էլ օրորոցի թեթևախօս երեխայից սկսած մինչև ութ կամ տաս տարեկան մանուկը, առաջ, համաձայն ծնողաց ցանկութեան, օտար լեզու է սովորում։ Ուրեմն ամօթ այն հային, որ իր պապերից ժառանգած ճոխ ու գեղեցիկ լեզուն թողած, այլոց դռներում լեզուի մուրացկանութիւն է անում։

Եթէ ազգային ոգին ազգային սովորութիւնների հետ պէտք է որոնել ընտանիքում, ապա ուրեմն ես իրաւունք ունեմ ստաւրօպօլաբնակ հային բարեկամաբար ցոյց տալ, որ նրա կեցած տունը վտանգաւոր ու խախուտ է, որովհետև աւազի վրա է շինած։—Արդեօք ո՞ւմ պարտքն է այս մասին խորհել և գործել. ինչու մի հոգացող չը կայ։ Մինչև ե՞րբ պէտք է Ստաւրօպօլի հայ հասարակութիւնը դատապարտված մնայ մի արժանաւոր հովիւ ունենալուց։ Ո՞վ չը գիտէ, որ արժանաւոր հովիւը մեծ նշանակութիւն ունի. նրանից շատ բան կախված է։ Ինչպէս որ մի բանիբուն հովիւ իր գեղեցիկ քարոզներով կարող է մեծ բարոյական ազդեցութիւն ունենալ ժողովրդի վրա, այնպէս էլ դրա հակառակը՝ յաճախ պատահում է, որ ինքնակոչի մէկը իր յիմարութիւններով երկպառակութեանց և գայթակղութեանց պատճառ է լինում։ Տարաբաղդաբար Ստաւրօպօլի հայ ժողովուրդը ազատ չէ եղել իր մանուկներից և խառնակիչներից և հիմա էլ ազատ չէ։ Սա ուներ իր հակազգային Տէր-Յովսէփները, որոնց քաջագործութիւնները պահված են հոգևոր ատեաններում։ Իսկ ներկայումս, այդ անցած գնացածների տեղը բռնած ունի մի ուրիշը։ Ուրեմն դժուար չէ երևակայել թէ ժողովուրդը շարունակ գտնվելով տգէտ հովիւների անվայել վարմունքների վատ տպաւորութիւնների տակ, որքան գայթակղված, որքան ճանձրացած պիտի լինի և հետևաբար սառած դէպի եկեղեցին։ Մեզանում հոգևորականը ոչ մի բանով բարոյական ազդեցութիւն չունի ժողովրդի վրա. նրա պաշտօնի վսեմութիւնը երևում է մի միայն մեքենայութեան մէջ։ Դրանից յետոյ այստեղ ու այնտեղ դիշերները անցկացնում է թղթախաղութեամբ և ուտել խմելով։ Ժամանակակից քարոզն էլ փոխվել է ծոմապահութեան։

Տարակոյս չը կայ, որ հէնց այս պատճառով էլ մեր խղճալի հայ եղբայրները կարևորութիւն չեն զգում կիրակի օրերը սիրով գնալ Աստուծու տաճարը։ Մեր Տէր-Խաբան առաջուց իր գըլխին չը հարցրած, Նորերումս եկեղեցում գրաւոր քարոզ է ասում հաղորդութեան և ապաշխարութեան վրա։—«Հաղորդիլ ոչ այլ ինչ է, ասում է շնորհալի Տէր-Խաբան, եթէ ոչ շաբաթ օրը խոստովանիլ, իսկ կիրակի առաւօտեան հաղորդվիլ»։ Ապաշխարութիւնն էլ այսպէս է բացատրում. «ապաշխարել նշանակում է մեղքերը արտասուքով լուանալ այնպէս, ինչպէս կեղտոտ շորերը ջրի մէջ լուանում են սապունով, և ապա աւելացնում է, ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ»։ Զը մոռանանք և մեծ պասի վերաբերութեամբ արած մեկնութիւնը։ Մի նշանագրութեան ժամանակ, բուն բարեկենդանի երեկոյին, երբ ուտել խմել շարունակվում է մինչև առաւօտ, քանի մի որկրամոլ փարիսեցիներ, երևի իրանց անձերը արդարացնելու համար, դառնում են դէպի քահանան որ այնտեղ է լինում, և հարցնում. «ասա՛ մեզ, հոգիդ սիրես, Տէր-Խաբա, որտեղից է մտել մեր մէջ այս սովորութիւնը, որ մեծ պասի երկուշաբթի շատ տեղերում ուտում են նախընթաց օրվանից մնացած իւղալի կերակուրները։ Մեր տէրտէրը, որ քաջ աստուածաբան է, ահա՛ թէ ինչ է պատասխանում։ «Ներսէս Շնորհալին և Գրիգոր Նարեկացին բարեկենդանի այդ օրը երեկոյին զբաղված են լինում կրօնական խնդրով, որ վերջացնում են հետևեալ օրը առաւօտեան։ Յետոյ սեղան են նստում, ընթրիքի փոխանակ նախաճաշիկ են անում։ Էնց որ մօտ են բերում խորոված աղանին, մի և նոյն ժամանակ ներս է մտնում երկու հիւրեկ յոյներ, և իսկոյն յիշեցնում են մեր վարդապետներին. «էջ որ այսօր մեծ պաս է»։ Ներսէս Շնորհալին նոր է հասկանում իր սխալմունքը, որի պատճառը եղած է Գ. Նարեկացին։ Երկուսն էլ հրաժարվում են ուտելուց։ Ներսէս Շ. խաչակնքելով խորոված աղանու վրա, ասում է. «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» և իսկոյն աղանին թռչում է։ Այլ ո՞ր մէկն ասէ մարդ. այսքանն էլ բաւական է»։ Այս սրանով ասել կուզեմ, որ մեր առաջնորդները էլի չեն ամաչում, այսպիսի ողորմելիներին քահանայ են ձեռնադրում։ Գրիգոր Ն. որ կենում էր 8-դ դարում, մտքովն էլ չէր կարող անցկացնել, որ 12-դ դարում Ն. Շնորհալի պէտք է հայոց ազգի մէջ երևայ։

Տեղիս երկսեռ ուսումնարանի հայոց լեզուի և կրօնի ուսուցիչ Գ. Հ. (Գր. Յարութիւնեանց) ժողովրդի ցաւալի և անմխիթար վիճակի հետ աչքի առաջ ունենալով նաև գիմնազիայում ուսանող 40-ի չափ հայ աշակերտները, որ բոլորովին զրկված են թէ մայրենի լեզուից և թէ կրօնագիտութիւնից, որոց ուսուցանելը ևս վեր է քան տէր Ռ. (Բարթուղիմէոս) մտաւոր կարողութիւնից, էլ չը կարողացաւ լրկ հանդիստես լինել։ Մտածեց ըստ կարողութեան այդ չարեաց առաջը առնել կիրակի օրերում դասախօսութիւններ կարդալով հայոց լեզուից և կրօնագիտութիւնից առհասարակ ժողովրդականների և գիմնազիայի հայ աշակերտների համար։ Այս մտադրութիւնը, որ անցեալ տարի հոկտեմբերին յայտնած էր, երկու կողմանէ ևս սիրալիր համակրութիւն գտաւ։ Ուսուցիչը՝ զանազան արգելքներ միանգամայն մէջ տեղից հեռացնելու համար, պատշաճ համարեց Աստրախանի վ. առաջնորդի հաճութիւնը նախապէս ստանալ, սրբազան առաջնորդը, որ անցեալ Թուականի սեպտ. 23-էն սկսեալ մինչև սոյն Թուականի փետրվարի 15-ը Ստաւրօպօլումն էր լինում, ըստ երևութին յայտնում է իր հաճութիւնը, աւելացնելով, որ ինքն բարի գործը արգելելու պատճառ չունի։ Ուսուցիչ Գ. Յ. շնորհակալութիւն անելով ասում է. «իսկ իմ կողմանէ երկչոտ մարդիկներին այլ և այլ կասկածներից ազատ պահելու համար, խոստանում եմ իւրաքանչիւր իմ դասախօսութիւնս գրաւոր և առանձին թերթի վրա ներկայացնել սրբազնութեանդ կամ ում հարկն է։ Մինչդեռ Գ. Յ. ոգևորված, լինելիք դասախօսութեանց պրոգրաման շուտով պատրաստելու խնդրով էր զբաղված, և ահա՛ երկու օր չանցած, յանկարծ մէկէն ամեն բան փոխվեցաւ։ Այս բարի նպատակը չունեցաւ իր ցանկալի հետևանքը։ Թէ ո՞վքեր են խափանիչները, ընթերցողը լաւ կը հասկանայ։

Ն.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Խագու, 22 մարտի

Ձեր համակրելի լրագրի թերթերի էջերում միշտ կարդում ենք «Բարատեան ընկերութեան յոյսերը, բայց ինձ թոյլ եմ տալիս աներկիւղ ասել որ այդ տեսակ դասախօսութիւնները ամենալաւ միջոց են հայոց նոր ծնվող հրապարակական դասախօսութիւնների անունը կոտրել, ամենալաւ միջոց են մեր հասարակութեան տիրացու մասի այնպէս էլ փչացած ճաշակը աւելի փչացնել և սովորեցնել նրան ադվոկատական, այն էլ ամենաանպէս դարդակախօսութեան, իսկ մեր օտարացած մասը զզուացնել հայոց կենդանի լեզուից....

Այժմ առանց մարգարէ լինելու կարող եմ ասել, որ պ. Ս. Արծրունի երրէք չի տանի պրոցէսը, եթէ գնայ Ֆրանսիա կամ Անգլիա այնտեղի դատարանների առջև Մխիթարեաններից փողեր պահանջելու համար։

Դորա համար, այդ տեսակ ծանր գործի համար հարկաւոր է աւելի գիտութիւն, գործի աւելի խոր ուսումնասիրութիւն, աւելի ընդունակութիւն....

***

Ինչ և իցէ, նախանձում եմ այն մարդկանց, որոնք կարող են երեք ժամ շարունակ խօսել, առանց որ և է միտք յայտնելու։

***

Գրեթէ ամեն օր մարդիկ են մտնում խըմբագրատուն և հարցնում են. «Ե՞րբ կը լինի Ասիացու ֆելիետօնը։»

Ի՞նչքան նամակներ ստացվեցան խմբագրատան մէջ, որոնց մէջ նոյն հարց էին առաջարկում։

Հարցնողները չեն հասկանում թէ ֆելիետօն գրելու համար հարկաւոր է երկու բան՝ մին հետաքրքիր նիւթ ֆելիետօնի համար և երկրորդ գրողի ֆելիետօնական հոգեկան տրամադրութիւն, որ միշտ չէ լինում և առուեստական կերպով ստեղծել այդ տեսակ տրամադրութիւնը անհնարին է։

Եւ ի՞նչ նիւթ կարելի է ունենալ ֆելիետօնի համար մեծ պասի ժամանակ։ Ամենքը տխուր են, ոչ ոք սրտով գործին չէ կպչում.... Խնջոյքներ չը կան, թատրոն չը կայ, մարդիկ միմեանց չեն տեսնում գրեթէ....

Պաս պահելը և եկեղեցիներում քարոզներ լսելը, ահա մեր ամբողջ գործունէութիւնը։

***

Ճշմարիտ է մի քանի գործեր կատարվեցան, ինչպէս փոխադարձ կրեդիտի ընկերութեան մէջ ընտրութիւնները, քաղաքագլխի ընտրութիւնը և այլն, բայց սրանք այնպէս հին, մաշված, սովորական բաներ են, որ ճշմարիտն ասեմ սիրտ էլ չունեմ նրանց մասին խօսելու....

***

Երբ որ իրականութիւնը միակերպ է, տրտուր է, անմխիթար է, երբ ներկան ծանր քարի պէս մարդուս սրտի վրա ճնշում է, ազատ շունչ քաշել չէ տալիս, մարդուն յատուկ է յափշտակվել երազներով, ապագայի վրա ցնորքներով....

Արի՛, ընթերցող, մենք էլ մտածենք, երազենք ապագայի մասին....

Ա՛խ, ինչպէս կուզենայի ես ապրել հինգ հարիւր տարուց յետոյ....

Ես երևակայում եմ ինձ թէ հինգ հարիւր տարուց յետոյ ես կրկին գալիս եմ այս աշխարհը և մտնում եմ Թիֆլիս....

Քաղաքը ճանաչել չէ կարելի։ Քաղաքի չորս կողմը երևում են ֆաբրիկաներ և գործարաններ, ամեն կողմ դուրս են գալիս քաղաքից և մտնում են երկաթուղիների գնացքներ, քաղաքի փողոցները գեղեցիկ կերպով քարած են, երկու կողմից ծառերով զարդարված, ջրված, մաքուր են, ամեն քայլի վրա ֆօնտաններ, ամեն տեղ ուսումնարաններ են երևում....Մարդիկ և կանայք մաքուր, հասարակ կերպով հագնված, ոչ մի մուրացկան չը կայ, ամենքը ունևոր են երևում, ամենքի երեսի վրա նկատվում է բաւականութիւն, իր վիճակով գոհ լինելը։ Ամենքը զործունեայ, աշխատող են....Ամենքը հոգում են թէ անձնական և թէ ընդհանուր օգուտների մասին.... Ոչ մի անգրագէտ, ոչ մի անգործ, ոչ մի տգէտ մարդ չը կայ։ Նախանձ, միմեանց դէմ ատելութիւն, միմեանց վնասել,—դրանք անհասկանալի բառեր են դարձել։ Մարդիկ չեն հասկանում ինչ բան է անշարժութիւն, խաւարասիրութիւն, մեռելապաշտութիւն, նախապաշարմունք....

Բայց ամենից շատ ուրախացնում է ինձ այն որ «Մշակը» դեռ կայ, նա ունի 200,000 բաժանորդ և իմ յաջորդս, «Մշակի» ֆելիետօնիստը, հարուստ մարդ է, խմբագրութենից ահագին ռոճիկ է ստանում, իր սեփական տուն ունի....և այդ բոլորը նա վաստակել է ֆելիետօններ գրելով, որովհետև գրական աշխատանքը գին ունի, ստատիկ գնահատվում է....

Ինչքան ուրիշ շատ բաների մասին կարող էի երազել, բայց ճշմարիտն ասեմ, այսօր այնքան վատ եմ տրամադրված, որ երազելու սիրտ էլ չունեմ...

***

—Բայց եթէ վատ տրամադրված էք, ի՞նչի էք ֆելիետօն գրում, կասէ ինձ ընթերցողը,

---

Վերջապէս դասախօսութիւնը աւարտվում սաստիկ սպառնալիքներով Հռոմի պապի և կաթոլիկութեան դէմ, մի քանի բարձրահրնչիւն բառերով՝ լոյս, լուսաւորութիւն, իրաւունք, պարտաւորութիւն, ազգի առջև պատասխանատուութիւն, հայութեան երկու սիւներ՝ ազգութիւն և եկեղեցի, դորա հետ ձեռքերի ամենաանպատակ շարժումներ, օրհնութեան պէս ձեռքերի մեկնելը դէպի հասարակութիւնը, պապի վրա խօսելու ժամանակ երեսի արհամարհական գրիմասներ և ձեռքերով ու ամբողջ կազմուածքով զրեթէ կանկանական անվայել շարժումներ, բառեր, առանց բովանդակութեան, խօսքեր առանց որ և է միտք,—ահա վերջացաւ դասախօսութիւնը, դասախօսը շնորհալի կերպով իջնում է ամբիոնից, հասարակութիւնը հիացած է, ծափահարում է, երեք անգամ դուրս է կանչում դասախօսին, կեցցէներ է կանչում....

***

—Շատ լաւ էր...

—Հա՛, հիանալի էր խօսում...բայց, դրուատն ասեմ, լաւ չը հասկացայ ինչ ասեց...

—Թէ ուզում ես, ես էլ դրուատն ասեմ քեզ, ես էլ բան չը հասկացայ...

—Բայց էլի լաւ էր։

—Հա՛, շատ լաւ էր։

—Ապրի....

—Եւ հասարակութիւնը ցրվում է...

***

Ես էլ կասեմ. խոստովանվում եմ, ինչքան լարում էի իմ ուշադրութիւնս դասախօսութեան ժամանակ, չը կարողացայ ոչինչ հասկանալ։

Ես չէի ուզենայ զբպարտել հասարա-

զրամադրութիւն, որ միշտ չէ լինում և առուեստական կերպով ստեղծել այդ տեսակ տրամադրութիւնը անհնարին է։

Եւ ի՞նչ նիւթ կարելի է ունենալ ֆելիետօնի համար մեծ պասի ժամանակ։ Ամենքը տխուր են, ոչ ոք սրտով գործին չէ կպչում.... Խնջոյքներ չը կան, թատրոն չը կայ, մարդիկ միմեանց չեն տեսնում գրեթէ....

Պաս պահելը և եկեղեցիներում քարոզներ լսելը, ահա մեր ամբողջ գործունէութիւնը։

***

Ճշմարիտ է մի քանի գործեր կատարվեցան, ինչպէս փոխադարձ կրեդիտի ընկերութեան մէջ ընտրութիւնները, քաղաքագլխի ընտրութիւնը և այլն, բայց սրանք այնպէս հին, մաշված, սովորական բաներ են, որ ճշմարիտն ասեմ սիրտ էլ չունեմ նրանց մասին խօսելու....

***

Երբ որ իրականութիւնը միակերպ է, տրտուր է, անմխիթար է, երբ ներկան ծանր քարի պէս մարդուս սրտի վրա ճնշում է, ազատ շունչ քաշել չէ տալիս, մարդուն յատուկ է յափշտակվել երազներով, ապագայի վրա ցնորքներով....

Արի՛, ընթերցող, մենք էլ մտածենք, երազենք ապագայի մասին....

Ա՛խ, ինչպէս կուզենայի ես ապրել հինգ հարիւր տարուց յետոյ....

Ես երևակայում եմ ինձ թէ հինգ հարիւր տարուց յետոյ ես կրկին գալիս եմ այս աշխարհը և մտնում եմ Թիֆլիս....

Քաղաքը ճանաչել չէ կարելի։ Քաղաքի չորս կողմը երևում են ֆաբրիկաներ և գործարաններ, ամեն կողմ դուրս են գալիս քաղաքից և մտնում են երկաթուղիների գնացքներ, քաղաքի փողոցները գեղեցիկ կերպով քարած են, երկու կողմից ծառերով զարդարված, ջրված, մաքուր են, ամեն քայլի վրա ֆօնտաններ, ամեն տեղ ուսումնարաններ են երևում....Մարդիկ և կանայք մաքուր, հասարակ կերպով հագնված, ոչ մի մուրացկան չը կայ, ամենքը ունևոր են երևում, ամենքի երեսի վրա նկատվում է բաւականութիւն, իր վիճակով գոհ լինելը։ Ամենքը զործունեայ, աշխատող են....Ամենքը հոգում են թէ անձնական և թէ ընդհանուր օգուտների մասին.... Ոչ մի անգրագէտ, ոչ մի անգործ, ոչ մի տգէտ մարդ չը կայ։ Նախանձ, միմեանց դէմ ատելութիւն, միմեանց վնասել,—դրանք անհասկանալի բառեր են դարձել։ Մարդիկ չեն հասկանում ինչ բան է անշարժութիւն, խաւարասիրութիւն, մեռելապաշտութիւն, նախապաշարմունք....

Բայց ամենից շատ ուրախացնում է ինձ այն որ «Մշակը» դեռ կայ, նա ունի 200,000 բաժանորդ և իմ յաջորդս, «Մշակի» ֆելիետօնիստը, հարուստ մարդ է, խմբագրութենից ահագին ռոճիկ է ստանում, իր սեփական տուն ունի....և այդ բոլորը նա վաստակել է ֆելիետօններ գրելով, որովհետև գրական աշխատանքը գին ունի, ստատիկ գնահատվում է....

Ինչքան ուրիշ շատ բաների մասին կարող էի երազել, բայց ճշմարիտն ասեմ, այսօր այնքան վատ եմ տրամադրված, որ երազելու սիրտ էլ չունեմ...

***

—Բայց եթէ վատ տրամադրված էք, ի՞նչի էք ֆելիետօն գրում, կասէ ինձ ընթերցողը,

րութեան» վերաբերմամբ բերկրալի տեղեկութիւններ։ Նթէ կարելի է ասել այդ ընկերութիւնը առաջինն է որ ծնած օրից իսկոյն պտուղները երևում են։ Մենք բազուցիներս ամեն րոպէ սպասում էինք մէկ անձնի—պարագլխի—հրաւէրին դէպի ստորագրութիւն այդ համակրելի ընկերութեան օգտին։ Այդ փափագելի րոպէն հասաւ. պ. Յովհաննէս Սողոմոնեան Վարձիգուլեանցը մէկ ստորագրութեան թերթով յայտնվեց հասարակութեան մէջ և ամեն ոք մեծ հաճութեամբ սկսեց ստորագրվել, այնպէս որ մէկ օրվայ մէջ արդէն 600 բուբլու էր հասել։ Այս առիթով, պ. խմբագիր, խնդարհագոյն կը խնդրեմ հրապարակապէս յայտնել իմ և շատ բազուցիների խորին սրտէ շնորհակալութիւնը յիշեալ պ. Վարձիգուլեանցին։

Ստորագրութեան հրաւիրվող անձներից պ. Նագոր Պաւլովիչ Լալայեանցը էլ ստորագրվում, ասում է՝ «ոչինչ, այդ չնչին օգնութիւններով ինչ պէտք է առաջանայ, ես մտադիր եմ մէկ հիմնաւոր բան շինել ազգի համար, ես մտադիր եմ այնտեղ—Վանի մէջ—դպրանոցներից մէկը վերառնել իմ հաշվին։ Այդ բանը պատմեց մեզ պ. Վարձիգուլեանցը։ Շատ ուրախ ենք, կը ցանկանք, որ պ. Լալայեանցը որպէս հարուստ անձն շուտով իրագործէ իր գիտաւորութիւնը։

Ռ. Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են, որ տէր Մովսէս քահանան պէտք է էջմիածին տարվի, երևի, քննվելու համար։ Նամակագիրը յոյս է յայտնում, թէ Սինոդը իր նկատողութեան կառնէ այն 25 հարցերը, որ ուղղած էին յիշեալ քահանային «Վերին-Ագուլիսի գերեզմանատան խնդիր» վերնագրով յօդուածի մէջ, և որին նա պատասխանեց «Մշակի» № 42 մէջ իր յիմար և կեղտաութիւններով լի նամակով։

—

Նոյն տեղից գրում են, թէ մի քանի պարոններ դիտաւորութիւն ունեն «Արարատեան» ընկերութեան համար ստորագրութիւն բաց անել և փող հաւաքել։ Եւ իրաւ, ազուլեցիք մինչև այսօր յետ չեն մնացել ոչ մի բարեգործական նուիրատուութենից, բայց «Արարատեան» ընկերութեան համար (բացի մի քանի մասնաւոր անձինքներից) դեռ ևս որ և իցէ օժանդակութիւն չեն արել։ յոյս կայ, որ այս բարի գործի մէջ ևս ազուլեցիք անմասն չեն թողնի իրանց հասարակութեանը։

—

Հաստատ աղբիւրներից տեղեկացանք, որ մեր աշխատակից պ. Ռաֆֆին նպատակ ունի այս տարի յունիս ամսում ճանապարհորդել Կ. Պոլիս տեղային հայոց կեանքը հետազօտելու համար։ Այլ և աւելի մօտից ծանօթանալով Կ. Պոլսի հայ մշակների (համալների) կացութեան հետ, պարոնը միտք ունի կատարելագործել իր գրած վէպը «Դարիբ մշեցի» անունով, որի նիւթը առնված է Կ. Պոլսի մշակների կեանքից, և որը շուտով տպագրել տալու ցանկութիւն ունի։ Պ. Ռաֆֆիի ճանապարհորդութիւնը մեր գրականութեան մէջ մի նշանաւոր տեղ բռնած լինելով, ցանկանում ենք յաջողութիւն, որ իր այս նոր ձեռնարկութիւնն ևս ի կատար ածէ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դաւրէժ, 24 մարտի

Մարտ ամսի 9-ին, առաւօտ, դեռ չը լուսացած մեր թաւրիզում եղաւ մի սաստիկ երկրաշարժ, երեք իրարու յաջորդող ցնցումներով, որոնք թէև վայրկենական, բայց սաստիկ էին, այնպէս որ ամեն մարդ արթնացաւ քնից այդ ցնցումներով։ Խարեբաղդաբար մեր քաղաքին ոչինչ վնաս չը տուեց, բայց յետոյ խմացանք որ Միանէ գիւղաքաղաքը վնաս է կրել, քանի մի տներ քանդվել և մի քանի հոգի նորանց տակ մնացել են։ Իսկ Միանէի մօտ (2 ֆարսախ) եղած Թէրք անունով գիւղը հիմն ի վեր քանդվել և նրա բոլոր բնակիչներն իրանց տաւարներով ջնջվել են երկրի երեսից։

«Մեղուի» 18 համարում գրված էր, որպէս թէ թաւրիզի ազգային դպրոցի դահլիճում եղել էր մի հանդէս, Վարդանանց տօնի առիթով, խօսվել էին ճառեր և այլն։ Այս յայտնում եմ որ դա մի սխալ լուր է, թաւրիզում մի այդպիսի հանդէս չէ եղել, իսկ դա տեղի է ունեցել միայն Թէհրանի ազգ. դպրոցի դահլիճում։ Մեր թաւրիզից միաբանական ոգին վաղուց խոյս է տուել, մենք ոչ հանդէս ենք կազմում, ոչ ճառ ենք խօսում և ոչ բառ։ Սառնութիւնը, անտարբերութիւնը և մեռելային անշարժութիւնը մեր բնական տիպը և բնաւորութիւնն է և կարծես ուխտել ենք այդպէս մնալու։ Թէհրանի հայերը որ մեր հասարակութեան հազիւ թէ մի չորրորդ մասն են կազմում, մեզանից շատ եռանդագին աշխատում են իրանց դպրոցի, ընթերցարանի և ազգային ուրիշ օգտակար հիմարկութիւնների համար, իսկ մենք բերաններ հովին տուած երգում ենք. «Իսկ մեք փառաւորեսցուք անմիաբանութեամբ և ոչնչով»։ Եւ վերջապէս Աստուած ողորմի այն մարդուն որ մեր շարժմանը պատճառ կը լինի հանելով մեզ այս մութից դէպի լոյս աշխարհ։

Մեր քաղաքի հայ երիտասարդութիւնը մըտադիր է զատկից յետոյ մի թատերական ներկայացում տալ, սակայն խրախուսողներ չը կան, բայց նա չէ յուսահատվում, շատ եռանդով և սրտագին աշխատում է, գուցէ և կը յաջողեցնի։

Քանի որ մենք կարծում էինք թէ թէրք գիւղը կործանելով շարժն անցել էր, այսօր ես առիթ ունեցայ տեսնել մի օրագրական ցուցակ որը գրուած էր Օէնգան քաղաքի հեռագրատանից, և որից երևաց որ երկրաշարժը սոսկալի վնաս է տուել Օէնգանի և Միանէի շրջականերում։ Եւ ահա այդ ցուցակից իմ քաղածները։ Խալխալի գաւառում, Սուրուլու, Ասադեահ, Սուֆլան, Գեօղլու և Հաջի Քէնդի բոլորովին կործանված են, իսկ Մաման, Ռահմաթաբադ և Ձինարլու գիւղերից մեռած են 154 հոգի։ Հաղազի գաւառում խախտված է 50 գիւղ, որոնցից Հասար, Թէրք, Խուբիսթան և 4 ուրիշ գիւղերում մեռած են 683 հոգի։ Այլ և այդ յիշած գիւղերում փչացել են 2660 ոչխար, 1125 տաւար, 124 ձի և 55 ուղտ։ Այս օրագրական տեղեկութիւնը ես ստացայ հէնց այսօր որ այս նամակը գրում էի։

Ա. Ա.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս վախճանվեցաւ Փարիզում Ֆրանսիական «Figaro» լրագրի հիմնող և խմբագիր պ. Վիլլեմէսան։ Ֆրանսիայի գաւառական մի քաղաքում ծնված, անհարազատ որդի, Վիլլեմէսան, առաջ ուրիշ ազգանունով սկսեց առուտուրով պարապել։ Նա ծախում էր կանանց զգեստների զարդեր, ժապավէններ և այլն։ Շուտով նա մանակացաւ։ Փոխելով իր ազգանուն նա գնաց Փարիզ, որտեղ շարունակեց դարձեալ մանր առուտուրով պարապել, պակվեց և բաց արաւ իր կնոջ հետ մի մոդային մագազին։ Մի և նոյն ժամանակ նա սկսեց մի մոդային լրագիր հրատարակել։ Փոքրը առ փոքր վարժվելով լրագրութեան մէջ, Վիլլեմէսան հիմնեց իր սեփական լրագիր, բայց գործը լաւ չէր գնում։ Հետզհետէ նա հիմնց մի քանի ծաղրական լրագիրներ և կրկին թողնում էր այդ հրատարակութիւնները, մինչև որ նրան աջողվեցաւ «Figaro» լրագիրը հիմնել։ Այդ լրագիրը շուտով ստացաւ ահագին նշանակութիւն։ Խմբագիրը իմացաւ միացնել իր խմբագրութեան մէջ ամենածայրայեղ քաղաքական բանակների մարդիկ, և չը նայելով որ թերթը քաղաքական չէր, շուտով նա ստացաւ Նապոլէոն III-ի կառավարութեան դէմ ընդդիմադրող օրգանի նշանակութիւն։ Փարիզը չէր կարող ապրել առանց «Figaro» լրագրի, Փարիզի բնակիչը սովորել էր այդ լրագրի ծաղրական ոճին, հանաքներին, նրա մէջ նկարագրվող սկանդալներին և այլն։ Այնպէս որ երբ մի օր «Figaro» յանկարծ փոխեց իր գոյնը և դարձաւ բոնապարտեան օրգան, ոչ ոք չը նկատեց այդ զարմանալի այլակերպութիւնը, որովհետև այդ լրագիրը անհրաժեշտութիւն էր դարձել փարիզեցու համար։ «Figaro» ունէր 60,000 բաժանորդներ, նա - ոյժ էր դարձել։ Գրեթէ անգրագէտ, բայց ճշմարիտ հանճարեղ խմբագիրը դեր էր խաղում Փարիզում։ Նա հարստացաւ, սեփական հիանալի տուն ունէր և ամենաերևելի մարդիկ թէ Ֆրանսիայում և թէ օտար երկիրներից եկածներ, արիստոկրատիան, և ուսումնականներ, իշխաններ պատիւ էին համարում ներկայ գտնվել պ. Վիլլեմէսանի իր տանը տրվող խնջոյքներին և երեկոյթներին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Վիեննա, 15|27 ապրիլի։ Անդրաշի յաճախ տեսակցում է կոմ Նուվալովի հետ. դժուարութիւնները հեռացրած են համարում. հաստատ լուր կայ թէ կոմ Նուվալով համաձայնեց Անդրաշիի հետ, որ եթէ արևելեան Ռումելիայի մասնաժողովի մեծամասնութիւնը պահանջէ թիւրքաց զօրքերը կարող են կանչվել. առաջին տարուայ ընթացքում թիւրքերը չը պէտք է դրաւեն Բալկանեան անցքերը։

Ս. Պետերբուրգ, 16 ապրիլի. «Правит. Вѣстн» լրագիրը հաղորդում է, որ Կայսրուհին Ալէքսանդրա Իոսիֆովնա Մեծ Իշխանուհու և Կոստանտին Կոնստանտինովիչ Մեծ Իշխանի ուղեկցութեամբ երէկ երեկոյեան յաջողութեամբ Լիվադիա հասաւ։ Տավրիկեան նահանգը ենթարկված է Օդէսայի ժամանակաւոր գենեռալ-գուբերնատորի իշխանութեանը։

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մենք ընթերցողներս միթէ պարտաւոր ենք ենթարկվել գրողի հոգեկան լաւ թէ վատ տրամադրութեան....

Դժբաղդաբար այսպէս է։ Գրողը տպաւորվում է հասարակութեան տրամադրութեամբ, նրա հոգեկան դրութեան արձագանք է դառնում, և իր կողմից իր ստացած տպաւորութիւնը յետ է տալիս իր ընթերցողներին։ Եւ ի՞նչպէս տխուր, անմխիթար հոգեկան տրամադրութեան մէջ չը լինի գրողը, երբ ոչ թէ միայն այն հասարակութիւնը, որի մէջ նա ապրում է, բայց և կարծես ամբողջ աշխարհը անպիտան տրամադրութեան մէջ է....Վեր առէք առաջին պատահած ռուս կամ օտար լրագիր,—և ամեն տեղ կը պատահէք սպանութիւնների և անձնասպանութիւնների լուրեր և նկարագիրներ....Մարդիկ կարծես զգվել են ապրելուց։

Մի քանի օր սրանից առաջ էլ բարեկամներիս շրջանում նստած, երկար ու բարակ խօսում էինք թէ ո՞րն է անձնասպանութեան ամենահեշտ, ամենայարմար միջոցը։ Մէկը թոյն էր առաջարկում, միւսը ասում էր թէ ատրճանակը ամենից լաւ է, երրորդը հաւատացնում էր թէ ամենաախորժելի մահը տաք բաղնիսի մէջ երակների բաց անելն է, վերջապէս ընկերներիցս մինը, որ մինչև այն րոպէն չէր մասնակցում մեր խօսակցութեան, ասեց. «Պարոններ, եթէ կամենում էք, կասեմ ձեզ մի շատ հեշտ և արագ միջոց այն աշխարհը գնալու համար. հարկաւոր է քիչ մրսել և մի բժիշկ կանչել,—և կարող էք հաւատացած լինել որ շատ շուտ կը մեռնէք։»

* *

Բայց թողնենք այդ տխուր մտածմունքները և խօսենք աւելի ուրախ բաների վրա։ Վաղը հինգշաբթի օր, լինելու է Թիֆլիսի ամարային թատրոնում հայ սիրողների մի ներկայացումն։ Աֆիշան շատ գեղեցիկ է։ Եւ ինչքան օրիորդներ են մասնակցում ներկայացմանը.....

Երբ որ մտածում եմ թէ ութ տարի սրանից առաջ ոչ մի Թիֆլիսի օրիորդ հայերէն մի խօսք չը գիտէր, իսկ այժմ այդքան բազմացել է հայերէն խմացող օրիորդների թիւը, հակված եմ այդ երևոյթը հրաշք համարել....

Մանաւանդ այդ տեսակ եռանդ և առաջադիմութիւն զարմանալի է Թիֆլիսցի օրիորդների վերաբերութեամբ.....

«Մշակը» իր առաջնորդող յօդուածներում շատ անգամ խօսել է Թիֆլիսցի հայ տղամարդի, մանաւանդ մեր համալսարանական ինտելիգէնցիայի վերաբերութեամբ, իսկ Թիֆլիսցի օրիորդների մասին երբէք չէ խօսել,—ուրեմն դարձեալ ինձ, ֆեմինիստիս վիճակված է մեր Թիֆլիսցի հայ օրիորդների մասին խօսելու։

Ի՞նչի եմ ասում թէ հայերէն խօսող հայ Թիֆլիսցի օրիորդը հրաշք կարող է համարվել....

Պէտք է ծանօթացնեմ ընթերցողներին Թիֆլիսցի հայ օրիորդի տիպի հետ, առհասարակ,—ի հարկէ պայծառ բացառութիւնների վրա չեմ խօսում։

Թիֆլիսցի հայ օրիորդը ոչինչ իդէալական չունի իր մէջ։ Նա չէ կարող, անընդունակ է զրաւվել, յափշտակվել որ և է վերացական գաղափարով.... Ազգութիւն, բարոյական վերացական պարտաւորութիւն, ազգին ծառայելը, մի գաղափարի իրան նուիրելը,—այդ բոլորը անհասկանալի է մեր օրիորդներին։

Թիֆլիսցի հայ աղջիկը հաշվող է, առևտրական սառնութեամբ կշռում է ի՞նչ է իրան աւելի շահաւէտ և ինչ չէ.... Նրան անհասկանալի է լոկ բարոյական պարտաւորութիւնը մայրենի լեզու սովորելու։ Նա սովորում է այդ լեզուն, միայն այն ժամանակ երբ այդ հարկաւոր է իր ապրուստը պահպանելու համար։ Այդ պատճառով հայերէն խմացողները էլի չքաւորներիցն են, իսկ ունևորները աւելորդ են համարում հայերէն սովորելու....

—Ի՞նչի համար պէտք է հայերէն սովորեմ, ասում է ունևոր Թիֆլիսցի հայ օրիորդը, ես խո վարժուհի, կամ դաստատու դառնալու չեմ...

Նրան անհասկանալի է իւրաքանչիւր հայ անհատի համար հայերէն սովորելու բարոյական պարտաւորութիւնը։

Ուրեմն արհամարհանքը դէպի իր մայրենի լեզու գլխաւոր պատճառ չէ որ Թիֆլիսցի, հայ օրիորդը հայերէն չէ սովորում, բայց այն որ հայերէնը գործնական կեանքի մէջ հարկաւոր չէ, այլ հարկաւոր է միայն աղքատ օրիորդների համար....

—Ես աղքատ խօ չեմ, որ իմ մայրենի լեզու սովորեմ, ասում է կրթված և ունևոր Թիֆլիսցի հայ օրիորդը....

Եւ սրանք պէտք է դառնան ամուսիններ և մայրեր, սրանք պէտք է կրթեն հայութեան ապագայ սերունդը.... Վայ մեզ.....

Այն ազգը երբէք առաջ չի գնայ, որ ամեն բանի վրա գործնական, առևտրական կէտից է նայում, որ չունի ոչինչ իդէալներ, ոչինչ բարոյական վերացական գաղափարներ։

Բայց ո՞վ է մեղաւոր եթէ մեր օրիորդները այսպէս են....

Ի հարկէ մեր ուսեալ երիտասարդները։ Նրանք են պատճառում այս մռքերը կանանց գլխներում։

—Ես պաշտօնական ծառայութեան մէջն եմ, ինձ ինչ հարկաւոր է մայրենի լեզուն, ես նրանով հացս չեմ վաստակում, ասում է մէկը։

—Ես էլ բանկումն եմ ծառայում, հայերէնը ինձ հաց չի տայ.... ասում է միւսը։

—Ես էլ աղվոկատ եմ, ի՞նչին է պէտք ինձ հայերէնը, ասում է երրորդը։

Այո՛ Թիֆլիսցին, գործնական, դրական, հաշվով, խելք մարդ է։

Իսկ եթէ կան խելագարներ, դրանք Թիֆլիսցիներ չեն....Օրինակ կան այնպիսի խելագարներ, որոնք ոչ թէ փող վաստակելու համար են սովորում հայերէնը, բայց ընդհակառակն դորա համար որ հայերէն լրագիր, կամ ամսագիր հրատարակելով դեռ իրանց գրպանից իւրաքանչիւր տարի մի քանի հազար բուբլ դեֆիցիտ ծածկեն....

Անբնական երևոյթներ մի կողմից միշտ պատճառում են անբնական երևոյթներ միւս կողմից։ Թող այդ լաւ հասկանայ մեր հայոց հասարակութիւնը...

Այդ ճշմարտութիւնը վերաբերվում է կեանքի ամեն հանգամանքներին, թէ հասարակական և թէ ընտանեկան երևոյթներին։

Ասիացի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թուին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօնների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմեան նոյն են մնում։ Մեկ ամսում եկք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլ է, կէս տարվան 6 բուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԵՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ПОТИ-ТИФЛИССКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА

ОБЪЯВЛЕНІЕ

Съ 9 Апрѣля будутъ въ движеніе товаропассажирскіе поѣзда: № 5 отъ Поти до Тифлиса и № 6 отъ Тифлиса до Поти по нижеслѣдующему росписанію

Поѣздъ № 5					Поѣздъ № 6				
Станціи.	Приходъ.		Отходъ.		Станціи	Приходъ		Отходъ	
	ч.	м.	ч.	м.		ч.	м.	ч.	м.
			ве	чера				попол	удни
Поти	—	—	6	45	Тифлисъ	—	—	12	56
Ріонъ	1	25	2	20	Гори	4	15	4	35
Квирили	3	46	4	39	Михайлово . . .	6	25	6	45
Михаилово . . .	9	36	10	06				по по	луноч
			попо	лудні	Квирили	11	44	12	15
Гори	11.	55	12	20	Ріонъ	1	24	1	54
Тифлисъ.	3	51	—	—	Поти	6	35	—	—

Пасажирскіе поѣзда: № 1 изъ Поти и № 2 изъ Тифлиса, а также товаропассажирскіе поѣзда № 7 изъ Сурама № 8 изъ Тифлиса будутъ въ движеніи по прежнимъ росписаніямъ.

Կենդանիների հովանաւորութեան ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան անդամները հրաւիրվում են ապրիլի 20-ին, երեկոյեան 7 ժամին շնորհ բերել ընկերութեան ընդհանուր ժողովին, որ լինելու է ընկերութեան բնակարանի մէջ, այն է ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ընկերութեան շինութեան մէջ, Բարիատինսկի փողոցի վրա, Ալէքսանդրեան այգիի մօտ։ Կարող են ներկայ գտնվել և կենդանիների հովանաւորութեան գործով բոլոր հետաքրքրվողները։ Անդամներից խնդրվում է բացի սորանից, վճարել ընկերութեան գանձապահին, պ. Գ. Մ. Կասումովին իրանց անդամական վճարը։ Պ. Կասումով կենում է Վօրոնցովսկայա Նաբերէժնայա փողոցի վրա, Վարլամովի տանը № 18 և ընդունում է փողերը առաւօտեան 8—9 ժամ և երեկոյեան 3—5 ժամ։

ПОРТНОЙ ИЗЪ ПЕТЕРБУРГА ГЕРМАНЪ на Гановской улицѣ въ домѣ Іоанисіани. Имѣю честъ извѣстить почтенеишеей публикѣ, что принимаю заказы своими товарами военныя и статскія платья и исполняю собственнымъ присмотромъ и также отдаю на прокатъ разныя костюмы кромѣ того въ моемъ магазинѣ имѣются мужскія и дѣтскія костюмы. Заказы и продажа производится по весьма умѣреннымъ цѣнамъ.

1—10

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը յայտնում է, որ ապրիլի 13-ին իր ներկայութեամբ կը լինի աճուրդ հինգ տարի ժամանակով կապալով տալու համար մի կտոր գետին, որ 6000 քառակուսի սաժէն տարածութիւն ունի և որ գտնվում է Թիֆլիսի երրորդ բաժնում, 10-որդ մասում, Լրիստովի տան հանդէպ Կուր գետի մօտ։ Դետնի սահմաններն են հիւսիսից Վ. օրոնցովի կամուրջը, արևելքից և հարաւից Կուր գետը, արևմուտքից Խարլովի կալուածները։

Մեզ խնդրում են յայտնել, որ Ֆրանսիական «Les Vosges» շոգենաւը, որի կապիտանն է պ. Պալու, և որ պատկանում է «Paquet. ընկերութեանը դուրս է գալիս ՓՕԹԻՑ ապրիլի 19-ին (մայիսի 1) դէպի Կ. Պոլիս և Մարսէյլ եթէ եղանակը աջող լինի։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված ՇԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ Ա-ԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ընկերութիւնը պատիւ ունի յայտնել պատուելի հասարակութեանը, որ նա իր հաստատմատար Լ. ՊՕԼԵԱԿԻ միջոցով ԹԻՖԼԻՍՈՒՄ սկսել է թէ կոտրած և թէ կոտրատած և թէ գըլխով ԲՐՕԴՍԿՈՒ շաքարի առուտուր։ Այդ առուտուրը մինչև այժմ պ. Պալեօվի ձեռքին էր։ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գտնվում է Թամամշեվի քարավանսարայում, Պասսաժում, երկրորդ յարկ։ ՊՕԼԵԱԿ։ 1—4

„Նուէր քեսաբեր գեղջացիներին“ անունով նոր դուրս եկած բրոշիւրը ծախվում է հատը 15 կոպէկով Թիֆլիսի Կենտրոնական և Զաքարիայ Գրիգորեանի գրավաճառանոցներում։ Հարիւրով առնողներին կը լինի 20% զեղջում, եթէ անմիջապէս դառան դէպի մեզ այս հասցէով։ Тифлисъ Григорію Теръ-Меликсетову. въ Сололакхъ, на Сололакской улицѣ, у Вознесенской церкви, въ д Микаила Галустова, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքսեդեկեան։

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցող կամ էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերգիևսկայա փողոցում Բայանդուրովի։

7—10

Ղարաբաղի և Լուխու մի քանի հայ գիւղերին առաջիկա ուսումնական տարեայ համար հարկաւոր են հայ և ռուս լեզուների և թուաբանութեան ուսուցիչներ. տրուում են բաւարար ռոճիկներ. ցանկացողները պէտք է յայտնեն նամակով իրանց ՈՒր և որքան սովորած լինելն. եթէ յայտնուեն միջնակարգ դպրոցներից աւարտածներ, նոցա կառաջարկուի ուսուցչութեան Լուխի և Լանքարան քաղաքներում. Նամակները պէտք է ուղղել հետևեալ հասցէով. Հ. ուշի Արիստակէս Վ. Սեդրակեան։

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Ապրիլի 17-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլուիմպերիալը)	8	55
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1740	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	241	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	238	—
Մարսելի կուրսը 244—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ամէ 113 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	65
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	320	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	40
» միւս տեսակը.	7	30
» չաքար աւազը.	5	60
» տրանզիտը. .	5	80
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի . . .	7	50
» թարաքամի .	4	20
Աղիւրը Շորագալու .	1	70
» Երևանի. . .	—	—
Գարին	1	—
Սոմար բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ . .	200	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լաքը) Ագուլեաց	55	—
Կօֆէն մօկօի. . . .	27	—
» լիանի . . .	22	—
« Մարտինոյին	18	—

ՀՆԴԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30—50 բուբլ. կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մանաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո. .	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու. ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկովի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	7
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ ներքին և գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակստ վենէրական և կաշու հ., Բուլգարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակստ վենէրական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Գուլչարեանց սիֆիլիտական և մրզային գործարանների.

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ վենէրականնկաշու հ., Բէյլս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. **. Ցօդուածը զրեցինք զամբիւղը, որովհետև մաքուր չէր գրած։

—Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. **. Նամակը ուսանողների տուած ներկայացումից զոյացած արդիւնքը ուշ հասցնելու մասին, չարժէ տպել։ Եթէ դրամը կորչէր այն ժամանակ կը տպէինք։

—ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ. ***. Չարժէ պատասխանել։ Շարունակեցէք գրել թղթակցութիւններ։

—ՋԱՌԹԱԼԱ. Մ. Մ. Ձեր ցնթերցարանի ապահովագրի համարն է 113։ Եթէ ապահովագիրը կորած էլ լինի, ոչինչ վնաս չունի, որովհետև միւս օրինակը մնում է մեզ մօտ։

—ԵՐԵՒԱՆ. Տեղացի. Նամակը հետաքրքիր չէ։

Дозволено Цензурою 17 Апрѣля 1879 г. Тифлисъ Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона